



ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ ԹԻԻ Է.

1870

ՆՈՅԵՄԲԵՐ

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ

Բարձրագոյն աստիճանները

Այսաստանեայց սուրբ Ակեղեցին խորհրդաւոր ու գեղեցիկ կերպով մը կ' յիշատակէ իւր ներքին և արտաքին կառավարութեան կերպը՝ երբ իւր որդւոյը կը սովբեցնէ օրհնել զԱստուած այսպիսի երզարանութեամբ. "Արեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զԱկեղեցի": Յայանի է ուրեմն որ այս կարգաւորութիւնը Աստուածային կ'համարինք և Առաքելական՝ դոնէ ըստ զբխաւոր մասանց, և ասոր զլխաւոր ապացոյցներէն մեկն է և այն՝ որ ամենայն եկե-

ղեցիք Վրիստոնէից նոյն կարգաւորութեամբ վարուած են յԱռաքելոց անտի մինչև յերրորդ և ի չորրորդ դար. հետագայ դարերուն մէջ ալ՝ առանց նոյն կարգաւորութեան էական և զլխաւոր մասերը փոփոխելու՝ աւելի զարգարեր ու պայծառացուցեր են պէսպէս խորհրդաւոր և հարկաւոր պարագաներովն:

Ինչպէս որ ամենայն արտաքին և քաղաքական բարեկարգ կառավարութեան մէջ զանազան աստիճանի պաշտօնեայք կ'գտնուին, այսպէս ալ Ակեղեցւոյ կառա-

վարութիւնն կամեցեր է Աստուած դաս դաս պաշտօնէից յանձնել, որոնք կարգաւ իրարմէ կախումն ունենալով՝ մի և նոյն նպատակին, այսինքն Ակեղեցւոյ բարեկարգ կառավարութեանը կ'ծառայեն: Աւայս աստիճաններուն զլսաւորներն ու էականներն անոնք են, որ Վրիստոսի ընդհանրական Ակեղեցւոյն մէջ ամեն ժամանակ այնպէս ձանջուած են, և են այս երեքը, Եպիսկոպոսոս-Նի-ն, Վահանայոս-Նի-ն, և Սարկա-սաֆոս-Նի-ն, և սոքա միշտ Առաքելական ձեռնադրութեամբ կտրուին կամ պէտք է տրուին արժանաւորաց: Ապիսկոպոսները իրրե յաջորդք առաքելոց՝ կառավարիչք են եկեղեցւոյն Աստուծոյ, ինչպէս որ յայտնի է նաև իրենց անունէն, որովհետև Յունական եպիսկոպոս բառը վերաբերուող կամ վերադիտող կնշանակէ. և սոքա կձեռնադրեն քահանաներ ու սարկաւազներ, եկեղեցւոյ խորհուրդները հաւատացելոց մատակարարելու և զանոնք հովուելու համար. նմանապէս քահանայոցից կամ երիցանց սպասաւոր և օգնական կձեռնադրուին եպիսկոպոսէն սարկաւազները, որոց Յունական անունը (փիւսթօնօս) կ'թարգմանուի պաշտօնեայ:

Աւրեմն ի՞նչ է արդեօք պատճառն, որ զրեթէ ամենայն եկեղեցական զրոց մէջ ինը աստիճան կհամարուի եկեղեցական դասակարգութիւնը, որ և կըսուի եկեղեցական Գահանայապետ-Նի-ն, Նոսրապետ-Նի-ն, և ս և Նահապետ-Նի-ն և ըն, թէպէտ և այն աստիճաններուն ճիշդ որոշմոնքը ամենայն եկեղեցեաց մէջ և ամեն ժամանակ միօրինակ չէ պահուած. և ինչնով կզանազանին իրարմէ այս աստիճանները:

Այս հարցման ընդարձակ պատասխանը եկեղեցական իրաւագիտութեան մէջ կարելի է զանել. մեք բաւական համարիմք - առայժմ - ամսագրոյս սահմանէն դուրս չենելով՝ այնքան միայն բացատրել՝ որքան որ օգտակար կ'տեսնեմք ընթերցողաց տարակոյսը լուծելու, և քանի մի ամիս առաջ ազգային լրագրաց մէջ ելած անհամաձայն կարծիքները ըստ կարի համաձայնեցնելու համար:

Աւնախ այս է հարկաւոր գիտելին՝ որ եկեղեցական աստիճանները թէպէտ և ինը հատ համարուին, բայց ամենն ալ հաւասար չեն այն կերպով՝ ինչ կերպով որ հաւասար կհամարուին նիւթական սանդուխի մը աստիճանները կամ ոտքերը, հապա երեքը, որ վերն ալ յիշեցինք, թէ զօրութեամբ կամ ներքին խսուութեամբ, և թէ պատուով կամ արտաքին իշխանութեամբ կզանազանուին միւսներէն, այնպէս որ եկեղեցւոյ դասակարգութեան աստիճանները երբեք միայն համրողներն ալ չեն սխալիր՝ երբոր անոր ներքին զօրութիւնը միայն հաշուի կզնեն, և կըսեն թէ եպիսկոպոսութիւնը, քահանայութիւնը և սարկաւազութիւնը միայն են գլխաւոր աստիճանք, և միւսները անոնց զրեթէ ըստորաբաժանումն: Աւ յիրաւի, Ակեղեցւոյ արտաքին բարեկարգ կառավարութիւնը բնական կերպով պահանջեր է, մանաւանդ քրիստոնէական սուրբ հաւատոյ բոլոր աշխարհք տարածուելէն ետքը, — որ եղաւ չորրորդ դարուն սկիզբները, մեծին Արոստանդիանոսի ՚ի քրիստոնէութիւն դառնալովը, — երբ Ակեղեցւոյ շայրապետները հարկ համարեցան նոյն իսկ Արևիկոյ սուրբ Ժողովոյն մէջ կանոններ

դնել նաև եկեղեցական դասակարգութեան աստիճաններուն համար, և բարձրագոյն աստիճանաց իրաւունքները որոշել:

Սուրբն Ղիսնեսիոս Արիսպագացի՝ Պօղոս Առաքելոյ աշակերտը՝ երկնային նուիրագետութեանց այսինքն հրեշտակաց վրայ խօսելով, ընդարձակ բանիւ կ'վարդապետէ ու կաւանդէ մեզ՝ թէ ինք դասք են հրեշտակաց, այսինքն Աթոռք, Վերովբէք, Սերովբէք, Տէրութիւնք, Օօրութիւնք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Հրեշտակապետք և Հրեշտակք: Արդ այս վարդապետութիւնը ընդունելի լինելով տիեզերական եկեղեցւոյն Վրիստոսի՝ իբրև հիմնեալ սրբոյն Պօղոսի բացայայտ խօսքերուն վրայ, սուրբ Հայրապետներն ալ, որ եկեղեցւոյ կառավարութիւնը հրեշտակային դասուց կարգաւորութեանը կնամանեցրնեն, նոյնպէս ինք աստիճան բաժնած են եկեղեցւոյ բոլոր մեծ և փոքր աստիճանները: Այս բանս կ'բացայայտէ և Ամբրոնացին ասելով. «Եկեղեցի քրիստոնէից . . . ՚ի դասակարգութիւն համեմատութեան երկնաւոր քահանայապետութեանցն ուղղեաց զկանոն և զաստիճան պաշտօնէից իւրոց . . . որպէս ղի լիցի և աստ ինն դասակարգութիւնն պաշտօնէից Աստուծոյ՝ զանազան պատուովք և իշխանութեամբք»:

Նոյն Ամբրոնացին զգուշանալով՝ որ չհարձուի թէ այս ինք աստիճանները ոչ միայն պատուով և իշխանութեամբ կը զանազանին իրարմէ, այլ և ներքին զօրութեամբ, առաջ երեք զլեւաւորները զատելով միւսներէն՝ նախասպառիւ կհամարի, և այսպէս կմեկնէ Պօղոս Առաքելոյն խօսքը թէ, «Օայս գիտելով խոր-

ւհըրդոյն Վրիստոսի քահանայագործողն Պօղոս, յերիս մասունս ըստ սոցա որոշեաց ասելով. Օորս եղ Աստուած Անկեղեցւոջ՝ այս են. նախ զԱռաքելաւորք են Ապիստոլոսք. երկրորդ զՄարդարէս, որք են Վահանայք. երրորդ զՎարդապետս, որք են Սարկաւաղքն»:

Այս ըսելէն ետքը եկեղեցական դասակարգութեան ինք աստիճաններն ալ մի առ մի կբացատրէ՝ հանդերձ անոնց իշխանութիւններովը: Ինչպէս որ խօսքերուն ընթացքէն և նոյն իսկ բառերէն յայտնի կերևի, այս բացատրութիւնները ՚ի Յունաց առնուած են մեր մէջ, և Ամբրոնացին նոյն կերպով մէջ կբերէ, կամ թէ ինքը Ամբրոնացին Յունարէն թարգմանած է: Եւ թէպէտ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ ևս ընդունուած է եկեղեցական դասակարգութեանց այս տեսակ բաժանումը, և այն ոչ թէ միայն Ամբրոնացւոյն ժամանակէն, այլ շատ դարերով յառաջ քան զնա, այսինքն զէթ Մեծին Վերսիսի Պատրիարքութեան օրերէն, սակայն աւելի պարզ և աւելի սովորական կհամարուի այժմ այս բաժանումը՝ որ Ամբրոնացւոյն օրերէն յետոյ ընդունելու կամ կարգադրելու է մեր Եկեղեցին, այսինքրն Ա.) Պատրիարքութիւն, Բ.) Ապիստոլոսութիւն, Գ.) Վահանայութիւն, Դ.) Սարկաւաղութիւն, Ե.) Ախասարկաւաղութիւն. (սոքա կըսուին սովորաբար Քթաստիճանք իսկ մնացեալ չորսը փոքր աստիճանք, որ են) Չ.) Չահարկաւաղութիւն, Խ.) Արդմնեցուցչութիւն, Բ.) Ընթերցողութիւն, և Թ.) Գունապանութիւն: Այսու ամենայնիւ բարձրագոյն աստիճանաց վրայ եղած անդեկուութիւնները բա-

ւական հետաքրքրական են, և Վամբրոնացւոյն համրած դասակարգութիւնը անտարակոյս հին է և մեծապէս պատկանելի, թէպէտ և այժմու սովորական դասակարգութենէն կղանազանի: Վասն զի շատ նշանաւոր է Յովհաննէս Վաթողիկոսին այն խօսքը, որով Մեծին Ներսիսի ըրած բարեկարգութիւնները պատմած առեւտր կրէսէ. «Աւ այսպէս ապա նահագետութիւն խորհրդոյ եկեղեցւոյ ՚ի մերումս, աշխարհի յցաւ բովանդակարար՝ ինն միանգամայն դասակարգութեամբ պատուեալ: Չզխաւորս Արքեպիսկոպոսացն Վրաց և Եղուանից Երեմիակոպոս ընդ ձեռամբ նորա (Պատրիարքին կամ Վաթողիկոսի) կարգեալ. իսկ ի Սերաստիա և ի Մելիտանէ և ՚ի Մարտիրոսաց քաղաքին Մեթրոպօլիտս կացուցանէին. իսկ Երեմիակոպոսոն ապա ըստ որոշեալ վեճակացն իւրաքանչիւրոցն հաստատէին, և Վահանայս և Սարգիստայոն և Կեսարիստայ, և Վրացոն և սահմաներ: Եւ յարքիկ ցան և ցիր ընդ բոլոր եկեղեցիս շայաստանեացս վայելչապէս յարդարեալ լինէին ՚ի փառս Աստուծոյ: Պատմաբանին այս խօսքէն յայտնի կտեսնուի, որ մեր սուրբ Եկեղեցւոյ մէջ ալ նուիրապետական դասակարգութեան աստիճանները հին առեւտրս Յունաց և Վամբրոնացւոյն համրածին պէս են եղեր, այսինքն Պատրիարքութիւն կամ Վաթողիկոսութիւն, Արքեպիսկոպոսութիւն, Մեթրապօլիտութիւն, Ապիսկոպոսութիւն, Վահանայութիւն, Սարկաւաղութիւն, Վիսասարկաւաղութիւն, Վերձանողութիւն և Արքեպիսկոպոսութիւն կամ Վաթողիկոսութիւն:

Նոյն դասակարգութեան ինը աստիճաններն են որ Վամբրոնացին աւելի ընդարձակ ոճով կատարագրէ, և մեք հարկ կհամարիմք այս տեղ միայն անոնց բարձրագոյն աստիճաններուն վրայ խօսիլ: «Արդ առաջին աստիճանն է յեկեղեցի, իրէսէ Վամբրոնացին, դաս Պատրիարքայ, որ թարգմանին առաջին հարգ, այսինքն շայրապետք . . . և զործ և իշխանութիւն է Պատրիարքին ձեռնադրել զԱրքեպիսկոպոս՝ որք են ընդ իւր վեճակաւ: — Պատրիարքական իշխանութեան ծագումը և անոր համար եղած խնդիրները աւելորդ կհամարիմք մեջ բերել. միայն թէ հարկաւոր է զիանալ, որ շայաստանեաց Եկեղեցւոյ Պատրիարքին (ինչպէս նաև Աստուծոյ Պատրիարքին) Վաթողիկոս այսինքն ընդհանրական անունը արուած է՝ իբրև նախագահ կամ մեծ Պատրիարք կամ ընդհանրական հոգևոր Վրուխ ազգի: Յայտնի է որ այս անունը սրբոյ հօրն մերոյ Վրիգորի Առևաւորչին և նորա յաջորդաց սեպհական պատուանուն ձանչցուած է, թէպէտ և Վաթողիկոսները երբեմն պարզապէս Պատրիարք կամ շայրապետ ըսուած են: Ուստի ամենայն Վաթողիկոս կրնայ ըսուիլ նաև Պատրիարք, շայրապետ, Ապիսկոպոսապետ, Վահանայապետ, ևս և Արքեպիսկոպոս. բայց ոչ ամենայն Պատրիարք կամ Արքեպիսկոպոս կրնայ ըսուիլ Վաթողիկոս. վասն զի, ինչպէս որ Վամբրոնացին ալ կրէսէ, «Վործ և իշխանութիւն է Պատրիարքին ձեռնադրել Արքեպիսկոպոս՝ որք են ընդ իւր վեճակաւ. և ՚ի չորս բաժին տիեզերաց նոքա տան հրաման վրան ժողով լինելոյ: Եւս լըրս քաժին

ըսելուն պատճառն այն է, որ իսկզբան չորս
 Եւեոտարանչաց աթոռներուն Երբեպիս-
 կոպոսները կամ եպիսկոպոսները Պատ-
 րիարք ըսուեցան. «Վասն զի նախ Մատ-
 թէոս զրեաց զԵւեոտարանն յԱնտիոք,
 կրակ Լամբրոնացին, Պատրիարքն Են-
 տիոքաց զնախապատուութիւն ունի քան
 զայլսն. իսկ յետ նորա Մարկոս յԱղէք-
 սանդրիայ (զրեաց). յաջորդ սորա
 պատրիարքն յետ սորա դասակարգե-
 ցաւ. և Ղուկաս ՚ի Հռոմ զրեաց, որ
 Հռոմայն է (պատրիարք) ըստ կարգի եր-
 րորդ էր պատուով, թէպէտ և զօրու-
 թեամբ (այսինքն արտաքին միայն իշխա-
 նութեամբ) առաջին: Եյլ Յովհաննէս
 հուսկ յետոյ յԱփեսոսս զրեաց. որ նո-
 րայն եղև պատրիարք՝ վերջնն աթոռով
 քան զերիան: Եյս կարգաւորութեամբ
 վարեցաւ եկեղեցի տիեզերաց մինչև ՚ի
 ժամանակ Յուստիանոսի թագաւորի
 . . . բայց Յուստիանոս իբրև թագա-
 ւորեաց, կամ եղև նմա փոխել զաթոռ
 սրբոյն Յովհաննու յԱփեսոսէ ՚ի Աոս-
 տանդնուպօլիս, և հաւանեցուցեալ զժո-
 ղով եպիսկոպոսացն՝ կատարեաց զնոյնն:
 Աւ Յուստիանոսս դարձեալ փոխեաց
 զԵթոնն Մարկոսի յԱղէքսանդրէ յԱ-
 ռուսաղէմ, թէ այս խօսքէն և թէ
 եկեղեցական պատմութենէն յայտնի է որ
 մեր Հայաստանեայց Արևելեցւոյ Հայրա-
 պետը իրաւամբ ըսուած է պարբերաբար
 ժամանակ, մանաւանդ մեծն Աերսէս և
 նորա յաջորդները մինչև ցայսօր: Իսկ Ա-
 ռուսաղէմի և Աոստանդնուպօլսոյ Հայոց
 Երբեպիսկոպոսները Պարբերաբար ըսուած
 են յետին ժամանակներս ՚ի պատիւ՝ մե-
 կը Արուսաղէմէ, որ քաղաք է երկնաւոր

Թագաւորին, և միւսը Աոստանդնուպօլ-
 սոյ՝ որ կըսուէր թագաւորեալ քաղաք:
 Այնպէս պատուանուն կարելի է համա-
 րել Սոյ և Եղթամարայ Երբեպիսկոպո-
 սաց կաթողիկոս անունը. բայց ասոնց ծագ-
 ման և իրաւանցը կամ իրաւասութեանը
 վրայ խօսիլը ուրիշ տեղոյ կթողուի:
 Չանք եկեղեցական դասակարգութեան
 միւս զլիսաւոր աստիճաններուն:

Արև Լամբրոնացին թէ, «Արկորդ
 դաս աստիճանի եկեղեցւոյ են Երթեպի-
 սկոպոս, որք թարգմանին եպիսկոպոսա-
 պետ կամ առաջին եպիսկոպոս: Եյս
 արթեպիսկոպոս անունը աւելի Երևելեան
 եկեղեցւոյ, մանաւանդ Յունական եկեղե-
 ցւոյ մէջ գործածուած է հին ատենը՝
 քան թէ Երևմտեան եկեղեցւոյ կամ Ա-
 տինացւոց մէջ: Յոյնք կհամարին որ իրենց
 սովորութեամբը արբեպիսկոպոսական ի-
 րաւասութիւնը միշտ կար, որովհետև մե-
 ծամեծ եպիսկոպոսները իրաւունք ունէին
 իրենց ձեռքին տակը եղած եպիսկոպոս-
 ները ժողովե կանչելու, և ժողովոյն մէջ
 նստելու, նմանապէս եպիսկոպոսները իրա-
 ւունք ունէին արբեպիսկոպոսին ատենը
 բողոքելու. բայց այս պատուանունին գոր-
 ծածութիւնը չորրորդ դարուն մէջ միայն
 սկսաւ յաճախել, և առաջին արթեպիսկո-
 պոս ըսուողը կհամարուի սուրբն Եթա-
 նաս: Մեր մէջ թէպէտ Պատրիկոսն ալ
 ըսուած է Քթ արթեպիսկոպոս, բայց երբ
 մեծին Աերսիսի ժամանակը մեր աթո-
 ոը պատրիարքական ճանչուեցաւ, այն ա-
 տն պատրիարքին՝ այսինքն Պատրիկոսին
 ձեռքին տակը մի քանի աթոռներուն
 եպիսկոպոսները միայն ըսուեցան արթեպի-
 սկոպոս, ինչպէս Երբեպիսկոպոս Եղուա-

նից, Արքեպիսկոպոս Շիրակայ կամ Անուոյ Էջն:

Յետ ժամանակաց այս պատուանունը տրուեցաւ գլխաւոր վիճակաց Առաջնորդներուն, մանաւանդ անոնց՝ որոց ձեռքին տակը ուրիշ եպիսկոպոսներ ալ կ'դառնուին:

Արքեպիսկոպոսաց համար ըսուած է որ ըստ կանոնի ժողովոյն 'Աիկիոյ' երեք արքեպիսկոպոս իշխանութիւն ունին պատրիարք ձեռնադրելու Էջն, բայց ըստ սովորութեան ամենայն եկեղեցեաց՝ այժմ արքեպիսկոպոսութիւնը եղած է սոսկ պատուանուն, զոր կրնդունին հասարակ եպիսկոպոսները՝ երբոր բարձրագոյն հոգևոր իշխանութենէ կ'ձանչցուին Առաջնորդ մեծ մի վիճակի կամ երեւելի եպիսկոպոսական մի աթոռի:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռոյն սովորութիւնն է՝ այս արքեպիսկոպոսական տիտղոսը կամ պատուանունը տալ եպիսկոպոսներու՝ նոյնպէս նոցա յանձնուած վիճակին մեծութեանը նայելով, թէպէտ և ամեն անգամ հարկ չհամարուի այս տիտղոսին համար առանձին կոնդակ ևս շնորհել անոնց: Ասկից կիմացուի որ մի հասարակ եպիսկոպոս չկրնար ինքզինքը արքեպիսկոպոս անուանել, կամ անունին հետ մէկտեղ ստորագրութեան մէջ արքեպիսկոպոս պատուանունը դնել, թէպէտ և արքեպիսկոպոսական աթոռ մը կամ վիճակ մը յանձնուած ըլլայ իրեն:

Ըստ այսմ մի եպիսկոպոսի արքեպիսկոպոս ըսուելու պատիւը կամ իրաւունքը անոր նման է կերպով մը՝ զոր ունի աւագերէցը կամ աւագ քահանայն՝ հասարակ քահանայի վրայ, վասն զի աւագերէցն ալ միայն պատուով և իրաւասութեամբ

վեր է քան զքահանայն, և ոչ թէ առաւելութեամբ աստիճանի ձեռնադրութեան: Աւրեմն ինչպէս որ հասարակ քահանային աւագերէցութիւն տուողը եպիսկոպոսն է, այսպէս ևս եպիսկոպոսին արքեպիսկոպոսական պատուանունը և իրաւունքը — որ վերջին ժամանակներս սովորութիւն եղած է արքեպիսկոպոս անուանել, — տուողը մեր ազգին մէջ անպատճառ պէտք է ամենայն շայոց Աթոռդիկոսը լինի:

Ոմանք կ'համարին թէ եպիսկոպոսը կըրնայ բնականապէս արքեպիսկոպոս անուուլ, երբոր իրեն յանձնուած աթոռը կամ վիճակը ըստ ինքեան արքեպիսկոպոսական է, բայց անտարակոյս նախադասելի է այն՝ թէ որ և իցէ եպիսկոպոս առանց կ'աթոռդիկոսի հրամանին պիտի չկարենայ ինքզինքը արքեպիսկոպոս անուանել, որքան և մեծ լինի իւր վիճակը: Ասոր պատճառն ալ այն է՝ որ արքեպիսկոպոսութիւնը՝ ըստ ուսանդութեան ամենայն եկեղեցեաց քրիստոնէից՝ զատ և որոշ դաս է աստիճանի եպիսկոպոսութենէն վեր, և ոչ թէ եպիսկոպոսութեան հաւասար:

«Աշիր դաս աստիճանի եկեղեցւոյ Մեհարայոցի, կըսէ Ամբրոնացին, որք թարգմանին մայրաքաղաքացիք . . . և գործ է նոցա ձեռնադրել եպիսկոպոս և օրհնել զմեռոնն՝ արկանելով 'ի նա պատրիարքական մեռոնն, զոր պահէ եկեղեցի յաւելուածով . և երեք մետրայոցի ունին իշխանութիւն ձեռնադրել զարքեպիսկոպոս իւրեանց, սակայն 'ի նախապատիւ պատրիարքէն (այսինքն 'ի կ'աթոռդիկոսէն) պարտի առնուլ զօրհնութիւն՝ սոցա հաճութեամբ և վկայութեամբ, Յովհաննէս Աթոռդիկոսին

վերոյիշեալ խօսքին մէջ յայտնի նշանակուած էր Մեքսիկայի բնուած եպիսկոպոսներուն պաշտօնը: Ասան զի, ինչպէս որ Յունական բառն ալ կցուցնէ, Մետրապօլիտ*) պէտք է ըսուի կամ կրսուէր մայրաքաղաքի եպիսկոպոսը՝ ըստ Յունաց: Մերոնք Հին ատենը այս պատուանունը և իրաւասութիւնը սեպհականներ էին միայն Մեքսատիոյ, Մելիտինէի և Նփրիկերտի կամ Մարտիրոսաց քաղաքի եպիսկոպոսներուն: Գամանակէ մը յետոյ Միւնեաց արքեպիսկոպոսին տրուեցաւ Մետրապօլիտ անունը հանդերձ այսպիսի իրաւունքով՝ որ «բարձակից և սեղանակից լինին կաթողիկոսի» ինչպէս որ կրսէ Ստեփանոս Առպէլեանց, և հրաման ունենան իրենց առջևէն միշտ խաչանիշ զաւազան տանել տալու: Նոյն հեղինակը այս նշանաւոր տեղեկութիւնս ալ կուտայ, «Միւնեացն վասն Մետրապօլիտութեան ՚ի վերոյ էր քան զամենայն եպիսկոպոսքն Հայոց. զի այլ ոչ ոք ունէր զՄետրապօլիտութեան պատիւն. և որքան պատրիարքն քան զարքեպիսկոպոսն է զեր ի վերոյ, և արքեպիսկոպոսն քան զՄետրապօլիտն, այսպէս մետրապօլիտն քան զեպիսկոպոսն. զի նա ձեռնադրէ զեպիսկոպոսն»: — Հարկ չէ ըսել՝ որ այժմու ժամանակս մեր ազգին եկեղեցական դասակարգութեանը մէջ Մետրապօլիտ անունը և Մետրապօլիտական իշխանութիւնը չըկայ: Ալ երջին Մետրապօլիտ եղած է՝ իբրև յաջորդ Միւնեաց աշխարհի Մետրապօլիտներուն՝ բարեյիշատակ և մեծանուն

Պաղտասար Մետրապօլիտը Հասան — Զալալեանց:

Եկեղեցական դասակարգութեան չորրորդ աստիճանն է Եպիսկոպոսութիւն, որոյ վրայ այսքանը միայն յիշատակեմք՝ իբրև վերոյիշեալ տեղեկութեանց ամբողջութիւն մը տալու համար՝ որ Եպիսկոպոսական իշխանութիւնը կամ աստիճանը յառաջելոց սահմանուած է, ինչպէս որ առաջ ալ ըսինք, և պաշտօնն է ձեռնադրութիւն ընել, եկեղեցի, սեղան, պատկեր օծել և ըն: Մեր ազգին երկրորդ կամ հանրական լուսաւորութեան ժամանակը՝ մինչև 400 էն աւելի եպիսկոպոս եղած կը յիշատակուի Հայաստանի մէջ, վասն զի, ինչպէս որ կ'իշխատակեն Ազաթանգեղոս և Օւենոբ պատմագիրները, սուրբ Լուսաւորիչն մեր հարկ համարեր է որ Հայաստանի ամեն մէկ գաւառներն ալ իրենց մէկ մէկ եպիսկոպոս ունենան: Պետրոս Պետաղարձ Աթողիկոսին օրերը Հայաստանի մէջ 500 եպիսկոպոսաց թեմ կամ վիճակ կ'համարուի եղեր, ուստի և 500 եպիսկոպոս, ինչպէս որ կրսէ Մատթէոս Առհայեցին. «Յորժամ էր Տէր Պետրոս յաթող Հայրապետութեանն և Հայաստան աշխարհին . . . եպիսկոպոսք 500 փառաւորք, և գաւառատեսուչս ՚ի վերայ 500 թեմի հանապազ»: —

Մեքսիկայի պատուանունին պէս խափանեալ է այժմ մեր ազգին մէջ նաև Քորեպիսկոպոս անուան գործածութիւնը, ինչպէս նոյնը խափանուած է նաև Յունաց և Լատինացոց մէջ: Քորեպիսկոպոս բառն ալ Յունարէն լինելով, կնշանակէ զիւզն՝ այսինքն քանի մը զեղերու եպիսկոպոս. իսկ եպիսկոպոսը քաղաքի կամ

(*) Յն. Մեքսիկայի, մետրապօլիտ. Քորեպիսկոպոս, մայրաքաղաք:

քանի մը քաղաքաց վերատեսուչ է: Վսրեպիսկոպոսները ներքին իշխանութեամբ եպիսկոպոսէն վար չեն, ինչպէս որ արքեպիսկոպոսք և Մետրապօլիտք ալ վեր չեն եպիսկոպոսէն. հապա միայն արտաքին պատուով և իշխանութեամբ ստորադրուեալ են եպիսկոպոսաց: Այս բաներուն ակնարկութիւն մի է նաև այն խօսքը՝ որ կկարդամք Աղեշի պատմութեանը մէջ թէ «Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ՚ի դեօզս, և յազարակս և ՚ի բազում ամուրս լեռնային դաւառացն»:

Չեմք կրնար վերջացնել այս յօդուածը՝ առանց աւելցնելու այնպիսի դիտողութեան արժանի տեղեկութիւն մը՝ որ Հայաստանեայց եկեղեցւոյ էական մէկ իրաւանցը կվերաբերի, և որում կամաւ կամ զանցառութեամբ ուշադրութիւն չենելով Հոռոմէական Հայերը, կարծեն թէ վկայութիւն կամ ապացոյց մը ունին Պապական աթոռոյն նախադահութեանը, կամ որ նոյն է՝ Հոռոմայ Պապին Հայաստանեայց Մայր Աթոռոյն և ուրիշ պատրիարքական աթոռոց վրայ ունեցած կարծեցեալ իրաւասութեանը: Ամբրոնացին, ինչպէս որ տեսանք, ի հարկէ ՚ի Յունաց առնուած և իւր ժամանակները մեր եկեղեցւոյն մէջ ևս ընդունելի և սովորական եղած կարգադրութեան նայելով, շատ կանոնաւոր կերպով կշարէ վերէն վար, և համառօտիւ կբացատրէ եկեղեցական դասակարգութեան ինքնատիճանները՝ այսպէս.

- Ե. Աստ. Պատրիարք.
- Բ. ,, Արքեպիսկոպոսք.

- Գ. Աստ. Մետրապօլիտք.
- Դ. ,, Ապիսկոպոսք.
- Ե. ,, Վահանայք.
- Զ. ,, Սարկաւազունք.
- Է. ,, Աէս—Սարկաւազունք.
- Ը. ,, Ընթերցողք (կամ Վը—(պիւք):
- Թ. ,, Արգեցողք կամ Սաղմոսասացք:

Երդ՝ Մխիթարայ Գօշի Ղատաստանագրոց վերջերը նոյն Ամբրոնացւոյ խօսքերը ոչ սակաւ պլլափոխուած ու համառօտուած կտեսնենք յանհմուտ զրէէ, և որ մեծն է՝ այնպիսի կամաւոր կամ տղիտական խարդախանօք մը՝ որ ամենայն կարգացողէ աչքին պէտք է զարնէ, և Ղատաստանագրոց դոնէ այն կտորին ձեռք խառնուած լինելը յայտնապէս կցուցնէ, Վասն զի թէպէտ առաջին վեց դասք եկեղեցւոյ կհամարէ այսպէս, Պատրիարք, Արքեպիսկոպոսք, Մետրապօլիտք, Ապիսկոպոսունք, Վահանայք, Սարկաւազունք, բայց զարմանալի կերպով եօթներորդ դաս կգնէ դարձեալ, Ապիսկոպոսները, ութերորդ Ապիսկոպոսները. «որք ունին, կըսէ, յղատուականագոյն աթոռ՝ նմանեալ սերովբէից . . . գործ է նոցա ձեռնադրել յղեպիսկոպոսունս և ինքնակամ օրհնել յղեղն օծութեան»:

Բայց ծիծաղելին, մանաւանդ թէ պժգալին ամենայն իրաւագիտաց և ողջամիտ աստուածաբանից՝ անոր իններորդ դաս ըսածն է, որ անշուշտ ժամանակին Ունիթոսացը մկուռն աւելցուցածն է՝ ՚ի շնորհուլս պապին և պապականաց. «Իններորդ դաս՝ վերագոյն յքան զամենեսեան՝ պապիս նմանեալ յքերովբէից . . . և գործ է նորս

„կարգել զգասս թագաւորաց, : Աթէ չգիանայինք այսպիսի խօսքերու իսկական նշանակութիւնը, ոչ ապաքէն իրաւունք կունենայինք բսելու՝ թէ այս շողքորթութիւնը ծաղրածութեան համար եղած է: Այսն զի նախ՝ ամենուն յայանի է որ Հռովմայ պապին իշխանութիւնն ալ արդէն յիշատակուած է Վատաստանագրոց այս հատուածոյն առաջին կտորին մէջ, յորում Պատրիարքաց վրայ խօսելով ըստ Ամբրոնացւոյն՝ ըսած է, “Արք ունին, զթոռ չորից աւետարանչացն, : Արկրորդ, ո՞վ տուեր էր պապերուն՝ նաև այն ժամանակները՝ իշխանութիւն կամ պաշտօն կարգելոյ զգասս Թագաւորաց: Ապաքէն և ոչ որ: Իսկ եթէ Վատաստանագիրքը խարդախող Անիթոռին միտքը այն էր որ Հռովմայ պապը ճանչցուի նաև ՚ի Հայոց՝ Թագաւոր Թագաւորաց և կայսր կայսերաց, մի մայն փոխանորդ Աստուծոյ ի վերայ երկրի, և գրեթէ Աստուծոյ անսխալ, ինչպէս որ սահմանեց այս տարի Այտիկանեան ժողովը, այդ մեզ ամենեին ընդունելի չէ, և ուրիշ յօդուածով պատրաստ եմք այդ ստակալե մոլորութիւնը հերքելու:”

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ԳԻՒՂՕՐԷԻՑ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ

ՇԱՄԱԽՈՑ:

ՅԱՐԳՈՒՅ ԸՆԹԵՐՑՈՂ.

Որովհետև Շամախոյ վիճակն իրան փոքրրկութեան համար և Հայաստան աշխարհից հեռի լինելու պատճառաւ՝ աննշան դրութեան մէջ է մնացած ցայսօր մեր հայրենակիցներէրց, որովհետև սորա վիճակի դրութիւնն և զիւղօրէից անուններն անձանօթ են սիրելի Ազգակցաց մերոց,

ուստի իմ այս տարի օգոստոսի 3-ին այցելութեան ժամանակին արժան համարեցայ զրչի տակ աւնուլ այն զիւղօրէից անուանքն և զիրք նոցա ըստ կարեացս փոքր ՚ի շատէ ծանօթացնէրց համար սիրելի ազգայնոց իմոց Շամախոյ վիճակի Հայերին, որ այժմ՝ յանձնուած է իմ հոգևոր հովուութեան:

Հատ ուրախական կը լինէր որ ամեն վիճակների այցելութեան լուրի պատմութիւնն լոյս տեսնէր այժմ՝ Հայոց պղին իմանալու համար իրան մեծութեան և որքանութեան չափը:

Ամենօրեան որքանոր Եմանու Հայոց ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՆԻԷԼ:

Արկու տարի և վեց ամիս Շամախի մնալով, և տեղոյն ժողովրդեան փոքր ինչ ուղղութիւն տալով, 1865 ամի օգոստոսի 3-ին յայցելութիւն ելի զիւղական եկեղեցեաց և ժողովրդեանն՝ առնելով ինձ հետ հոգևոր ատենի Ատենագալիք Սահակ Ազարեանցը: Արեքշաբաթի օր ժամ 4-ին զկնի ճաշին՝ բացակայեցայ ես Շամախի քաղաքից, և իմ ընթացքս ուղղեցի զէպ ՚ի Քալախանէ անուանեալ զիւղն: Այս զիւղն ընկնում է հարաւակողմ Շամախոյ՝ 5 վերստ հեռաւորութիւնով: Այս զիւղն տաճկաց լեզուով անուանում է Շխլու. որովհետև շատ գերեզմաններ կան Տաճկաց, որը գմբէթազարդ պարբսպապատ, և որը քարից փորած և Տաճկական տառերով զարդարված: Տեղոյս բնակիչք պատմեցին, թէ՛ ո՞վ որ այս գերեզմանների քարերից բերէ և տուն շինէ՛ կը կատարէ, և այլ այսպիսի անտեղև հրաշքներ պատմեցին. բայց ես նախապաշարմունք համարեցի և տգիտութեան պրտուղ: Այս գերեզմանատան մեծ տարածութիւնիցն երևում է, որ պէտք է եղած լինի փոքրիկ քաղաք:

Այս զիւղն իրան տարածութեամբ ընկած է հիւսիսակողմն մի գերեզմանի հովտի.